ԵՄ ՀԱՅԱՍՏԱՆ - ԹՎԻՆԻՆԳ ԾՐԱԳԻՐ
Գործողություն 6.1

Ջրի վիճակագրության և ջրի հաշիվների ընթացիկ իրավիճակի գնահատում և դրանց առնչվող միջազգային չափանիշի վերաբերյալ քննարկում

ՋՐԻ ՀԱՇԻՎՆԵՐ

2016թ. փետրվարի 1-4, Երևան,

DANMARKS STATISTIK

Պարտադիր արդյունք

Սույն գործողության հետ կապված պարտադիր արդյունքը՝ ՊԱ7

- Կազմված ջրի հաշիվներ (հուլիս 2017թ.)

Չափանիշներ

- Ջրի հաշիվների համար տվյալների աղբյուրների (հասանելիության, տեղեկատվական հոսքի) գույքագրման սահմանում (2016թ. ապրիլ)
- Մշակված ջրի հաշիվների մեթոդաբանություն (2017թ. հունվար)
- Իրականացված հանդիպում շահառուների հետ (2017թ. հուլիս)
- Կազմված ջրի հաշիվներ (2017թ. հուլիս)

2. 6.1 գործողության նպատակը և սպասվող արդյունքը

Նպատակը

- Ընթացիկ իրավիճակի գնահատում
- Միջազգային և եվրոպական ստանդարտների վրա հիմնված ջրի վիճակագրության և ջրի հաշիվների կազմման և մեթոդաբանության ներկայացում և քննարկում

Սպասվող արդյունքը

- Միջազգային և եվրոպական ստանդարտների գնահատման և պարզաբանման վերաբերյալ առաքելության զեկույց եզրակացություններով
- Պլանավորված աշխատանքային ծրագիր հաջորդ գործողության համար (գործողություն 6.2-ը ծրագրված է 2016թ. մայիսի 16-20)

Եզրակացություններ

- Ջրի վիճակագրությունը Հայաստանում կարծես համապատասխանում է ջրի հաշիվներին ներկայացվող պահաջներին, ինչը շատ լավ մեկնակետ է:

- Շահառուների հետ հանդիպումը ապահովեց շատ ակտիվ մասնակցություն և հետաքրքրություն, ինչը փաստում է, որ ՀՀ ԱՎԾ-ն լավ հարաբերությունների մեջ է բնապահպանական խնդիրներով զբաղվող շահառուների հետ:

- Բոլորիս համար պետք է պարզ լինի, որ ջրի հաշիվները հանդիսանում են բացառապես ջրի վիճակագրության հետևանք:

- Անշուշտ սպասվում է դժվարին, բայց ընդհանուր առմամբ ոգևորող աշխատանք:

- Վստահաբար, Իստատի և ՀՀ ԱՎԾ-ի արդյունավետ համագործակցությունը, փորձի փոխանակումը կհանդիսանա մեր երկրներում ավելի լավ ջրի հաշիվներ ունենալու խթան:

Առաջարկություններ

- ՀՀ ԱՎԾ տվյալների բազայում առանձնացնել Ներքին ջրերի վերաբերյալ Եվրոստատ-ՏՀԶԿ միացյալ հարցաթերթը լրացնելու համար հասանելի և բացակայող ցուցանիշները:
- Պատրաստել Եվրոստատ-ՏՀԶԿ միացյալ հարցաթերթում օգտագործվող ցուցանիշների ստացման աղբյուրների ցուցակը:
- Նկարագրել հասանելի ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանությունը՝ Եվրոստատի չափանիշներին համապատասխանությունը ստուգելու և ջրի հաշիվներում ՀՀ ԱՎԾ տվյալների կիրառումը ավելի լավ հասկանալու համար:
- Ստուգել տվյալների որակը՝ փոխկապվածությունը, փոխհամաձայությունը, բացակայող արժեքների դիտարկումը, շեղված տվյալների առկայությունը, չափման տեսակը, գնահատման մեթոդաբանությունը:
- Օգտագործել Եվրոստատի ստանդարտացված դրոշակները տվյալների առանձնահատկությունները բնորոշելու համար:
- Ստուգել դինամիկ շարժի ամբողջականությունը:
- Ուսումնասիրել Եվորոստատի «Ֆիզիկական ջրային հոսքերի հաշիվներ» ձեռնարկը և Ներքին ջրերի վերաբերյալ Եվրոստատ-ՏՀԶԿ միացյալ հարցաթերթի համար տվյալների հավաքագրման ձեռնարկի վերջին տարբերակը:

Ճանապարհային քարտեզ և ժամանակացույց (1)

- ՀՀ ԱՎԾ-ին հանձնարարված աշխատանքները մինչև մայիսին կայանալիք հաջորդ առաքելությունը՝
  - Նկարագրել ջրի վիճակագրությանն առնչվող տվյալների աղբյուրները և հոսքերը (հասանելիություն, տեղեկատվական հոսք):
  - Լրացնել ջրի հաշիվներին վերաբերող հասանելի բարձրորակ ցուցանիշները Ներքին ջրերի վերաբերյալ Եվրոստատ-ՏՀՋԿ միացյալ հարցաթերթում:
  - Բացակայող կամ անորոշ որակի ցուցանիշները պետք է աստիճանաբար ընդգծվեն, որպեսզի առանձնացվեն օգտագործվելիք լավագույն փորձի օրինակները (փոխարինող փոփոխականներ, գնահատման մոդելներ, հետազոտություններ, վարչական տվյալներ):
  - Ուսումնասիրել Եվորոստատի «Ֆիզիկական ջրային հոսքերի հաշիվներ» ձեռնարկը:

- <u>Վերջնաժամկետը</u>՝ 2016թ. ապրիլի վերջ

Ճանապարհային քարտեզ և ժամանակացույց (2)

- Հաշվի առնելով հարցաթերթերի բարդությունը և պահանջվող փոփոխականների մեծ քանակությունը՝ փետրվարի 1-ին սկիզբ առած համագործակցությունը պետք է կրի «շարունակական» բնույթ՝ ուղեկցվելով տեղեկատվության, պատկերացումների և առաջարկությունների էլեկտրոնային եղանակով փոխանակմամբ, որպեսզի անորոշությունները անհապաղ պարզաբանվեն և աշխատանքը շարունակվի: Այդուհանդերձ, առաջիկա առաքելություններն ընդհանուր առմամբ միտված կլինեն արդյունքներով կիսվելուն և վավերացմանը:

- Հաջորդ առաքելության ընթացքում արդրադարձ կկատարվի նաև ջրի հաշիվների դրամական հայեցակետերին: